

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆ

Բոլոր Քրիստոնեայ հին և առաքելական Եկեղեցիները — կաթողիկէ և Արևելեան — ունին իրենց ծագման և կազմաւորման շրջանէն խօսող աւանդութիւնները: Ետտ բնական այս երևոյթը — քանի որ այդ օրերուն գոյութիւն չունէին թերթեր ու հրատարակութիւններ, ու ա՛յնքան նախնական մակարդակ չէր կր պարզէին գրելու և իրար հետ հաղորդակցելու միջոցները — ոչինչով սակայն կը հակասէ Եկեղեցիներու հիմին կամ արմատներուն խորութեան ու տոկունութեան — շարունակ զգոյնաց զնա մի՛ յաղթահարեցեն — կամ հաւատքին և դաւանանքին ուղղափառութեան:

Մեր այս հաստատուած հիմնաւորուած է առաւելարար Յովհաննու Աւետարանը եզրափակող նշանակալից համարին վրայ, թէ Յիսուսի ըրած գործերը — կամ Անոր աստուեր կեանքին հետ մօտէն կամ հեռուէն աւելնութիւն ունեցող զէպքերն ու եղելութիւնները — ամբողջովին չեն արձանագրուած, և չէին կրնար արձանագրուիլ իրենց անսահմանօրէն ծաւալուն հանգամանքին պատճառաւ, Ս. Գրոց մէջ:

Մեզ նման հաստատումներ ընելու և այս կարգի խորհրդածութիւններ կատարելու մղիչ ոյժը կու գայ նորարոյս Եկեղեցիներու — կը խղճահարիմ բառը զըլխագրելէ, շաղանգ՞ը աւելի յարմար պիտի գար — վերջերս Եւրոպական ձայնասփիւռէ՞մը Արևելեան և Առաքելական Եկեղեցիներու հասցէին ըրած անճահ մեղադրանքէն, իբր թէ աւանդութիւններու անտեղի առատութեամբը պղտորած ենք պայծառութիւնը մեր բիւրեղ հաւատքին:

Աւանդութիւններու գէ՞մ բարբառող քարակարգեալ՞ Եկեղեցիներէն շատեր — անոնց թիւը այնքա՞ն մեծ է ու անկայուն — իրենց յարձակման թիրախ դարձուցած են ամենէն աւելի Ս. Կոստան անձը: Կ'ուրանան մանաւանդ անոր վերափոխման աւանդութիւնը, զոր կը նկատեն ինքնանար ու մտացածին վարդապետութիւն:

Մեզի տարօրինակ չի թուիր երբեք այդ բանգէտներուն այս տեսակէտն ու

կեցուածքը, քանի որ անոնք կ'ուրանան կուսութիւնը Տիրամօր, ինչպէս նաև սրբութեան յատկանիշը ամէն արարածի:

Տիրամօր սրբութիւնն ու յաւերժական կուսութիւնը, իբրև Ուղղափառ Եկեղեցոյ (Եկեղեցիներ չկային դեռ երանեալ այդ օրերուն) հիմնական վարդապետութիւն, ընդունուած և հռչակուած է 431 թուականին Եփեսոսի մէջ գումարուած Երրորդ Տիեզերական ժողովին կողմէ, որուն մասնակցած են 200 հայրապետներ, տալով անոր Աստուածածին մակդիրը: Բոլոր այն Եկեղեցիները, կամ իրենք զիրենք այդպէս կոչել յանդգնող անգրւախ ու անկազմակերպ կազմակերպութիւնները, սրոնք կը մերժեն յիշեալ ու նախորդ երկու Տիեզերական ժողովներու մէջ բանաձևուած վարդապետութիւնները, դուրս են լնդհանրական Եկեղեցոյ մարմինէն, և որոնց որակւածին համար ցաւ է մեզ գործածել «հերձուածող» և «հերետիկոս», առնուազն ոչ — ուղղափառ մակդիրները:

Վերափոխման աւանդութիւնը, եթէ նոյնիսկ իր ետին չունենար միահաղոյն դաւանութիւնը բոլոր Ուղղափառ Եկեղեցիներուն, ամբողջապէս հաշտ է ողջամիտ արամարանութեան: Մայրը ամենատիրելի էակն է մարդ արարածին: Մենք ուրախութիւն պատճառելու համար մեր մայրերուն, կ'ընենք մեր գերագոյն կարելին: Քրիստոս, որ տէրն է կեանքին ու մահուան, կրնա՞ր միթէ թողուլ որ որդնակեր ըլլար մարմինը իր սիրասուն մօր և չփոխադրէր զինք իր մօտ, իբրև թագու՞ր Երկնքի և Երկրի ընելու զինքը բնակիչը յաւերժական լոյսի կայանին:

Աւանդութեան շնորհիւ է որ Եկեղեցիներ հաստատած են իրենց առաքելական հիմնադրութիւնն ու հանգամանքը: Սուրբ Երկրի սրբավայրերէն գրեթէ իւրաքանչիւրը ունի իր աւանդութիւնը:

Աւետարանները տուած են մեզի հիմնատարքը մեր հաւատքին: Աւանդութիւնները կոչուած են զայն առաւել հիմնաւորելու և պողաւորելու, և ոչ թէ քանդելու կամ անէացնելու:

ԳԷՈՐԳ Ս. ՃԻՆԻՎԻԶԵԱՆ